Կը ձգտինք ունենալ այն, ինչ որ չենք կրնար ունենալ: Կարիքը կը զգանք տեսնելու անտեսանելին: Ասիկա գրաւիչ ուժով կ'օժտէ կորսուած արուեստը եւ կը մղէ, որ արուեստագէտներ արուեստի նոր գործեր ստեղծեն՝ փորձելով վերականգնել կորսուածը: Արուեստի պատմութեան մէջ վերջաւորութիւնը սկիզբն է:

«Երբ բախտը մարդիկը կը հասցնէ իր անիւն բարձրութեան, կը փորձէ գանոնք դարձեալ վար նետել», գրած է վերածնունդի ժամանակներու արուեստաբան Ճիործի Վասարի արուեստի պատմութեան նուիրուած իր հուշակաւոր գործին նախաբանին մէջ, 1568ին: Հնադարեան Հռոմը կործանեցաւ եւ պատճառ դարձաւ, որ աւերւին «ամէնէն գերագանց արհեստաւորներուն, քանդակագործներուն, գեղանկարիչներուն եւ ճարտարագէտներուն գործերը: Արուեստներն ու մարդիկը թաղուեցան ամէնէն Հուլիանոսը քաղաքին սպանող ու աւերի հեղեղին տակ», կը գրէ ան իր «Գեղանկարիչներու, քանդակագործներու եւ արուեստագէտներու կեանքը» գործին մէջ: Վասարի կը պատմէ, թէ ինչպէս իտալացի արուեստագէտները՝ Չիմապուէն մինչեւ Միքելանջիո վերականգնուցած են հնադարեան Հռոմի եւ Յուլիանոսի արուեստը, վերստին յայտնաբերելով գեղեցկութեան սկզբունքները: Թէեւ վասարիի գործը լաւատեսութիւն կը ներշնչէ, սակայն անիկա «ցաւով» կը նշէ մեծ թիւով արուեստի գործեր, որոնք արդէն անհետացած էին անոր ժամանակներուն, ինչպէս՝ այն որմանակարները, զորս Միքելանջիո փճացուցած էր վերջին ընթերցի գծեցն առաջ, եւ այն գործերը, որոնք աւերուած էին Ֆլորանսի վայրագ պաշարուած ժամանակ, 1529 - 1530ի միջեւ:

Արուեստի գործեր տեսաբար կը կորսուին: Անոնց նուիրուած ցուցահանդէսը ցնցիչ է: Անիկա յուշակոթող մըն է, որ կը ցանկագրէ արուեստի անհետացող գործերը: Կորսուած կ'աւրձանագրուին նոյնիսկ այսօրուան աշխարհին մէջ, որ օժտուած է ղեղանկարի դիմակալելու կարողութեամբ եւ ապահովանալ միջոցառումներով: Կը թուի, թէ կարելի չէ առաջը առնել ոչ միայն կողպուտի դէպքերու, այլ նաեւ՝ արուեստի գործերու փճացումին, որ կը շարունակուի Վասարիի ժամանակներէն ի վեր ողորմամբ, երկրայարժեքներ, հրեշտակներ եւ պատերազմներու պատճառով:

Ճէյմս Քասթրոն «Թայթենիք» ժապաւէնին

ՈՒՐ ԿՄԵՐԹԱՆ ԱՐՈՒԵՍԻՏԻ ԳՈՂՅՈՒԱԾ ԳՈՐԾԵՐ

ԳՈՐԵՐ ԿՐԱՆՔ ՓՐԿԱԳԻՆ ՊԱՆԱՅԵԼ ԿԱՄ ՊԱՐԱՊԵՍ ԶԵՐԲԱԶՍԻԼ ԻՐԵՆՑ ԳՈՂՅԵՐ

Խուճը մը գողեր Սկոպիտոյ մէկ ղզեակէն գողցած են Լէոնարտո տա Վինչիի 30 միլիոն փառուտ արժողութեամբ մէկ գործը եւ իրենց քով պահած են գայն:

Սակայն ի՞նչ կրնան ընել անոնք: Արդեօք ոեւէ մէկը պիտի ուզէ՞ զնել իրենց գողցած գեղանկարը:

Երբ Ճէյմս Պոնտի հայածած շարաններ տիրարներէն Տաթթըր Նո իր որջին մէջ ցուցադրեց կոյսից «Ուելինկոնի դուքսի դիմանկարը», ան հիմը դրաւ «ապարանքի վրայ» արուեստի գլուխ գործոցներու գողութեան առասպելին:

Կոյսից գեղանկարը նոր գողցուած էր եւ, ժապաւէնին համաձայն, Տաթթըր Նո կը գտնուէր գողութեան ետին:

Այժմ, ամէն անգամ երբ արուեստի հուշակաւոր գործ մը կը գողցուի, մարդիկ կը սկսին խօսիլ մեծահարուստի մը կողմէ ապապրանքով կատարուած գողութեան մը հաւանականութեան մասին:

Միջազգային ոստիկանութեան արուեստի գողցումը իրերու բաժանումներին մասնագէտներէն ժան Փիեռ Ժուանիի համաձայն, սաիկա ժապաւէններու մէջ համոզիչ կը թուի ըլլայ, սակայն իրական կեանքի մէջ չի պատահիր:

Փոխաբեր՝ գողեր սահմանափակ կարիքութիւններ ունին, երբ հուշակաւոր գեղանկար մը կը գողանան: Ամէնէն հաւանականը փրկագինի պահանջն է, կ'ըսէ Ժուանի. «Այս մարդին մէջ կ'աշխատուի 25 տարիէ ի վեր, եւ յաճախ զբամ կ'ապահովուի գողցումը գեղանկար մը վերադարձնելու համար», կ'ըսէ ան:

Երբ շատ բան կը գրուի գողութեան մը մասին, գողցումը իբր օրինաւոր կերպով կարճուել անկարելի կը դառնայ: «Սակայն կարելի է գիտնալ, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ սեւ շուկային մէջ», կ'ըսէ Ժուանի:

Նաեւ հաւանական կրնայ ըլլալ, որ գողը պարզապէս շատ կը սիրէ արուեստի տուեսալ գործը:

Սթեֆան Պրայթիլըր անունով 32 տարեկան

մարդ մը միլիոն փառուտ արժողութեամբ արուեստի հարկուաւոր գործեր գողցած է Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Զուիցերիոյ պատկերասրահներէն՝ գանոնք իր տան պատերուն վրայ կախելու համար:

Բրիտանիոյ ռճարային արարներու գաղտնի սպասարկութեան համաձայն, ամէն տարի 300 միլիոնէն 500 միլիոն փառուտ արժողութեամբ արուեստի գործեր եւ ճուղիներ կը գողցուին Բրիտանիոյ մէջ, մեծ մասը՝ «քրէական յանցագործներու կողմէ»:

Սակայն արուեստի միջազգային շուկային տարողութիւնը գրաւիչ է կազմակերպուած աւագակախուածներու համար: Իսկ գողցումը գործեր կարելի է մէկ տեղէն միւսը փոխադրել «առանց հետապնդուելու վախի», կ'ըսէ սպասարկութեան մէկ բանբերը:

«Գիտենք, թէ կազմակերպուած աւագակախուածներ արուեստի գործեր եւ ճուղիներ կը գողցան այլ ռեկրններ գործարարութեան անհրաժեշտ գումարներ ապահովելու համար, կ'ըսէ բանբերը: - Դրամի չզոյլութեան պարագային, անոնք գէնք կամ թմրեցուցիչ կը գնեն գեղանկարը օգտագործելով»:

Արուեստի քննադատ Պրայլը Սիւուէլ կ'ըսէ, թէ Լէոնարտո տա Վինչիի գեղանկարը փորձութեան պիտի մատնէր ոեւէ «իմար գող մը»: Սակայն անիկա «շուկայ չունի, որովհետեւ այնքան հուշակաւոր է, որ սեփական հաւաքածոյի ոեւէ սեփականատէր պիտի չյանդգնէր գնել գայն»:

«Արթուրի» շարաթաթերթի խմբագիր Օսիան Ուարտի համաձայն, Լէոնարտո տա Վինչիի գեղանկարին գողութիւնը շատ հաւանաբար պարզապէս աւագակախութիւն է:

«Գողերը հաւանաբար նկատուին, թէ գեղանկարը կը պատկանէր Լէոնարտոյի, մտածեցին, թէ կրնան գողնալ գայն, առանց անգրագառնելու, թէ պիտի չկարնան ծախել իրենց գողցումը, թէ՛ ոչ այս երկրին մէջ, թէ՛ արժէ ան: Գողերը կամ թէ՛ ակամայ չկրնան ձերբազատիլ գեղանկարէն, որովհետեւ արուեստի աշխարհին մէջ



Եթ Չիմապուէի չար բախտը շարունակուի, վերածնունդի ժամանակաշրջանի կայծը վառած այս գեղանկարիչը շուտով պիտի դառնայ առասպելական դէմք մը: 1997ին Իտալիոյ Ասիսի քաղաքը հարուածած երկրաշարժը աւերեց Ս. Ֆրանչիսկո մատուռը, որուն մէջ ծանր վնասներ կրեցին Չիմապուէի որմնակարները:

մէջ արդի արուեստի պատմութեան երեւակայական տարբերակ մը կը ներկայացնէ: 20րդ դարու արուեստի մեծագոյն գործը՝ Փայլո Փիքասոյի «Լէ տրուուազլ տ'Ալիսինո» կ'ընկղմի նաւուն հետ: Ասիկա քաճած մօտեցում մըն է: Այս գեղանկարը, որ ծնունդ տուած է գերիրապաշտութեան, Քասթրոնի ժապաւէնին մէջ, ընկղմած է 1912ին, տիրահուշակ նաւուն եւ անոր 1500 ճամբորդներուն հետ: Իրականութեան մէջ գեղանկար կար կախուած է նիւ Երոքի Արդի արուեստի թանգարանին մէջ, ուր հսկողութեան տակ է եւ գուրգուրանքի առարկայ: Սակայն ի՞նչ պիտի պատահէր, եթէ իրապէս կորսուած ըլլար անիկա:

Վստահաբար Ալիսինոյ օրիորդները աւելի պիտի համաձայնէին մեզ: Ասիկա չի նշանակեր, թէ պէտք է անտարբեր ըլլալ կողպուտի կամ չարագործութեան նկատմամբ, կամ՝ որեւէ արարքի, որ կը միտի փճացնել արուեստի գործ մը: Սակայն արուեստի գործ մը չի մեռնի, երբ կ'անհետանայ. ընդհակառակը, անոր ուժը կը բազմապատկուի: Այն գործը, որ կը ցնցէր մեզ, երբ կը դիտէինք գայն, կը փառաբանէր մեզ իր բաժակայութեան, երբ կը մտածեք անոր մասին: Ասիկա ցայտուն կերպով կ'ապացուցէ այն իրողութիւնը, թէ արուեստը «տեղի կ'ունենայ» մտքին մէջ:

Մատնանք Գողութեան մասին:

Արուեստի գողցումը գործերու հետքը փնտրող Արթուր Ռեյնոյս սպասարկութեան պատասխանատու շոն Ռատթլիֆ համաձայն է այն տեսակէտին, թէ չարաները մեծահարուստներ սովորութիւն չունին թանգարաններու մէջ ցուցադրուող արուեստի գլուխ գործոցներ ապսպրելու գողերու:

«Գոյութիւն չունի Զուիցերիոյ մէջ նստած ռճարային ուղեղով մեծահարուստ մը, որ իր տան պատերուն վրայ գողցուած գեղանկարներու հրաշալի հաւաքածոյ մը կախած է, - կ'ըսէ ան: Արուեստի հաւաքածոնքը պահողներուն մեծ մասը կ'ուզէ իր սեփականութիւնը ցուցադրել անորութեան»:

Սակայն Ռատթլիֆի համաձայն, տա Վինչիի գեղանկարը ծախել «անկարելի չէ»: Երբեմն նման գործեր շատ աւելի ուշ կը յայտնուին շուկայի վրայ, երբ մարդիկ կը կարծեն, թէ բաւական ժամանակ անցած է, եւ գնորդներ կրնան պատրաստ ըլլալ գանոնք գնելու:

Գողեր կրնան արուեստի գործ մը վաճառել իրեւ անոր բնօրինակին հարագատ մէկ ընդօրինակութիւնը, կամ գայն պահելու տաղտուկէն զգուած՝ վերադարձնել տէրերուն, կ'ըսէ Ռատթլիֆ:

Լէոնարտոյի «Ատուածամայրը իլիկին հետ» գեղանկարին արժէքին համազօր էր Սեզանի գողցումը մէկ գործը, որ ի վերջոյ յայտնուած է դրամատան մը գաղտնի մէկ դարակին մէջ, ուր գողեր գայն պահած էին 20 տարի առաջ:

«Անոնք ի վերջոյ երազակցուցած են, թէ կ'ուզեն ձեռքադրուի գեղանկարէն, - կ'ըսէ Ռատթլիֆ: - Հուշակաւոր գեղանկարներ վերագտնելու հաւանականութեան համեմատութիւնը 20 առ հարիւր է, սակայն երբեմն հարկ է 30 տարի սպասել»:

Պատրաստեց  
L. ԿԻՒՂՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

# ԶԱԻԱԽՔԻ ՕՐԵՐ 3-8 ՆՈՅԵՄԲԵՐ 2003

**ԱՅՆՃԱՐ** **ԱՅՆՃԱՐ**

ՀԱՌՈՒՐՏ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003,  
Այնճարի Ս. Պողոս Եկեղեցու մէջ

հանգուցեալ բարերարներուն՝  
ՄԻ ՀՐԱՆ, ԶԱՊԵԼ ՀԱՌՈՒՐՏ ԵՒ  
ԼԷՅԼԱ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆՆԵՐՈՒ

Յիշատակին

Սիրով կը հրաւիրենք բոլոր անոնք, որոնք  
կը փափաքին յարգել մեր բարերարներու  
յիշատակը:

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**  
Հ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՆԻ ԿԻԿԼԷԶԾԵԱՆԻ մահուան քառասունըփն  
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կա-  
տարուի Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Նոր Ատա-  
նայի Ս. Աստուածածին Եկեղեցու մէջ, յաւարտ Ա.  
պատարագի:

**ՀԱԼԷՊ** **ՀԱԼԷՊ**

ԽՈՐԷՆ ԱԶՆԱՌՐԵԱՆԻ մահուան քառասունըփն  
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կա-  
տարուի Կիրակի, 2 Նոյեմբեր 2003, Հալեպի Ս. Գրի-  
գոր Լուսաւորիչ Եկեղեցու մէջ, յաւարտ Ա. պատար-  
ագի:

ՀՐԱՉ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ մահուան Ա. տարելի-  
ցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կա-  
տարուի Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի  
Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցու մէջ, յա-  
ւարտ Ա. պատարագի:

### ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5573 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՇՐՈՂՈՒՄ	ՈՒՂԱՆՑՆԵՍ
1. Խորհրդ. բուրձ:	1. Արական անուն - Մանչուկ:
2. Գեղամ Սարեանի եր- կերէն - Մարգարէի հացի:	2. Գեղեցիկ արքայ - Լիզպոնի նահատակնե- րէն:
3. Տափարակ - Նատա- ւեղի:	3. Հարուած - Որդի:
4. Թանաքաման, մեղանա- ց:	4. Հակամէտ - Կոնաբեր ծառ:
5. Խաղաթուղթի մէկ- նոց - Օրէնք:	5. Արական օտար անուն - Պատուար:
6. Մկունդ - Հարսին բոլոր՝ փեսային նկատ- մամբ:	6. Հոգեգաւակ - Դրամ:
7. Ամսանուն մը - Զեր- մուկներ գտնող իշապա- նը:	7. Կսկիծ - Հասկցի:
8. Մակարոյծ միջատ - Պողպաջ:	8. Ուրիշին ծիրին մէջ դարձող:
9. Կլայել - Տարի - Սու- տանի լիճերէն:	9. Մահիճի գլխակողմ - Նոյն գիրերը - Յուցական անական:
10. Թերի, անաւարտ:	10. Պոչատ՝ ընծաուիծ - Միածին:

**Թի 5572**

**ԽԱՉԲԱՌԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄ**

1	U	Q	U	R	U	Q	B	S	Z
2	N	O	T	E	R	R	T	U	E
3	G	R	O	T	C	U	Q	U	N
4	T	S	O	U	U	T	S		
5	Y	Z	U	S	S	U	S	U	
6	T	U	L	U	U	Q	U	S	
7	R	U	R	O	U	U	T	R	
8	U	N	U	E	U	R	S		
9	U	U	Y	U	U	U	E		
10	T	L	N	U	Z	S	O	N	

**bezdig\_mezdig@hotmail.com**

## ԱՖՀԻԼ AFHIL

### ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

**RENT AND SALE**


- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՅՈՒՑԱՍԱՐԱՄ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ՇԵՆԱ (02) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**



### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

**ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)**  
Ձեր հեղինակութիւնը պարտադրելու դժուարու- րին պիտի ունենաք: Երկու անգամ մտածեցէք նախ- քան որոշում տալը, որպէսզի ձեր ջանքերը ապարդիւն չմնան:

**ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Ձեզի առաջարկուած գործը շուտով մի՛ ընդունիք, որովհետեւ ձեր տարիքին կամ ձեր դիրքին յարմար չէ: Մարդոց հետ սակարկութիւն ընելու պահուն եղէք խոհեմ:

**ԵՐԿՈՒՌԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Ընդհանրապէս կեանքը այդպէս մը կը տնօրինէ, որ ձեր փնտած մեծ սէրը կը գտնէք յանկարծ, անակըն- կալ կերպով: Այսօր ասոր փաստը պիտի տեսնէք ձեր ճամբուն վրայ:

**ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Ձեր մանկութեան օրերէն մնացած դէպք մը, որ գէշ ազդած է ձեր վրայ, այսօր նոր անդրադարձով մը պի- տի յիշեցնէ ձեզի տխուր բաներ: Յոռետես մի՛ ըլլաք:

**ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
Մի՛ երկմտիք գարնելու դուռը ձեր նոր դրացիներ- ընդ, որոնց հետ պիտի ունենաք հետաքրքրական հան- դիպում մը: Մարդը մարդով կ'արժեւորուի յաճախ: Համեստ եղէք:

**ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
Արքայական խնձորք մը կազմակերպելու սիրոյն ձեր քակը մի՛ պարպէք: Ամէն ինչ օգտակար է իր չա- փաւորութեան մէջ: Մեծածախ սեղանները չէ որ միշտ յաջող կ'անցնին: Պահեցէք ձեր պարզութիւնը:

**ԿՇԻՌԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
Գիտէք ճիշդ իր ժամանակին եւ առիթին ցուցաբե- ռել ձեր անհատական համեստութիւնը: Ճիշդ այս պատճառով է, որ այսօր պիտի փայլիք ձեր հմայիչ կեցուածքով:

**ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Սանձարձակ կերպով վճարած է ձեր առողջու- րեան, հետեւաբար գացէք ձեր արեան հերթական քննութիւնը կատարելու: Խնամեցէք ձեր առողջու- րիւնը:

**ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Մարդոց հետ ձեր յարաբերութեան ընթացքին չա- փազանցութիւններու կը դիմէք. այսօր նման պատա- հարներու դիմաց պիտի գտնուիք: Ձեր պիւտեմէն մի՛ վճարէք:

**ԱՅՏԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Ձեր աշխատանքը կազմակերպեցէք այսօրուընէ սկսեալ, որպէսզի եթէ քանի մը օր ետք յաւելեալ աշ- խատանքներ ունենաք, ներդրութեան չմատուցիք:

**ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Հետաքրքրական ճամբորդութիւն մը որոշած էք. բայց ափսոս պիտի ըլլայ, եթէ առանձին ճամբորդէք: Մտածեցէք հանելի նախածնունդութիւններու մասին:

**ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Փոքր նուէրներ պիտի ընծայէք, բայց՝ բազմաթիւ: Այս կը ճշտակէ, թէ շատ պիտի ծախսէք: Ձեր հաշիւը ճանապարհ պատրաստեցէք, որպէսզի ետքը չզոհաք:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՈՒ / ՅՈՒՑԱԿԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ

## ՆԱՊԻԼ ՂԱՆՏՈՒՐԻ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՅՈՒՑԱԿԱՆԴԵՍԸ «ՓՈՒԷՆ ՏԸ ՎԻՒ»

Միացեալ Նա- հանգներու եւ Ֆրանսայի մէջ իր գեղարուեստի ակա- դեմական ուսումը ստանալէ եւ թերա- սի «Հէմըր» գրադա- րանին մէջ անհա- տական ցուցահան- դէս մը ներկայացնե- լէ ետք լիբանանցի գեղանկարիչ Նապիլ Ղանտուր առաջին անգամ ըլլալով իր գործերը կը ցուցադ- րէ Լիբանանի մէջ: «Ռոշան» արուեստի ցուցասրահին մէջ տեղի ունեցող անոր անհատական ցուցա- հանդէսը, որ կը կրէ «Փուէն տը վիւ» խո- րագիրը, հանրութեան կը ներկայացնէ ար- ուեստագիտի ուղան- կարներէն քսան օրի- նակ:

Նապիլ Ղանտու- րի նախապէս եղած է կա- հոյքի եւ կիրարական արուեստի յղացող, սա- կայն, որոշ ժամանակ Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ ապրելէ ետք, որոշած է ամբող- ջութեամբ նուիրուիլ գեղանկարչութեան: Իր սակադեմական ուսման առընթեր ան մասնակ- ցած է հոշակաւոր գե- ղանկարիչներու աշ- խատանքային հանդի- պումներուն՝ տիրապե- տելու համար խորհրդ- րապաշտութեան, գերի ապաշտու- թեան եւ տպարա- պաշտութեան սկզբունքներուն:

Նապիլ Ղանտու- րի գործերը կը յատ- կանշուին գոյներու ներդաշնակութեամբ եւ կերպարներու աշ- խուծութեամբ ու ուժգնութեամբ: Ար- ուեստագիտը ներշնչ- չուած է իր այցելած վայրերուն մշակոյթ- ներէն եւ լուսաւոր մթնոլորտէն՝ զա- նոնք երփներանգե- լով իր պատանե- թուն վրայ: Անոր գե- ղանկարներուն մէջ կան նաեւ հայրենա- սիրութեան խորհրդ- դանշաններ, որոնք կ'արտայայտուին Լիբանանը ներկա- յացող պատկերնե- րու տեղադրումով:

- ԱՅՍՕՐ**
- Նուագահանդէս՝ դաշնակահար Թաթեմա Փրիմաք Խուրիի ելոյթ, ժամը 19:00ին, Պալաման- տի համալսարան:
  - Նուագահանդէս՝ Լիբանանի Ազգային Սինֆո- նիք նուագախումբի ելոյթ, ղեկավարութեամբ Ալէն Փարիի, ժամը 20:30ին, Սէն ժոզէֆ եկեղեցի:
  - Պարային ելոյթ՝ «Վուլաթ տ'էօն բոր», ժամը 20:30ին, «Էլ Մատին» բառերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:
  - Թատրոն՝ «Պ'Ինթիգար Կոսո», ժամը 20:30ին, «Պէլլուր» բառերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:
  - Թատրոն՝ «Լէ ֆուրպերի տը Սքափէն», ժամը 20:30ին, «Մոնո» բառերասրահ, մինչեւ 26 Հոկ- տեմբեր:
  - Նկարչական ցուցահանդէս՝ «Փուէն տը վիւ», Նապիլ Ղանտուրի գործերը, «Ռոշան» ցուցասրահ, մինչեւ 4 Նոյեմբեր:
  - Նկարչական ցուցահանդէս՝ «Ալիօ», Մոնա Սա- նանի գործերը, «Ջաման» ցուցասրահ, մինչեւ 1 Նոյեմբեր:
  - Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Պի- Ռուք», «Կէօթէ» հիմնարկ, մինչեւ 19 Նոյեմբեր:
  - Նկարչական ցուցահանդէս՝ «Քալըր եւր Մայնո», ժուանա Սալթալիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 15 Նոյեմբեր:
  - Ջետեղման արուեստի ցուցահանդէս՝ «Ըբրոս Քանթիլընթ», ժիւնա Մաքքի Պաշոյի գործերը, «Ֆընել» ցուցասրահ, մինչեւ 23 Նոյեմբեր:
  - Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փայետիւն աւան 1948», Ֆրանսական Մշակութային Կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:
  - Լուսանկարչական ցուցահանդէս՝ Ալեքսանդր Մաքսիմովիչ Չիլովի գործերը, Ռուսական Մշա- կութային կեդրոն, մինչեւ 27 Հոկտեմբեր:

### ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 24 Հոկտեմբեր 1953

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Երկու-երեք շաբաթ առաջ, երբ անգլիական թերթերը խոշոր վերտա- ութիւններով կը ծանուցէին անգ- լիսեգիպտական հաւանական համա- ծայնութիւն մը Սուէզի հարցին շուրջ, այդքան չափազանց լատտես ըլլաւու պատճառներ չկային: Այսօր իրաւունք կ'ունենան անոնք, որոնք նկատու ունենալով երկու կողմի տե- սակետներուն խոր տարբերութիւնը արջը սպաննէ առաջ մորթը ծախելու մասին չէին մտածեր:

Անգլիական ուժերու Սուէզէն հե- ռացումը, մէկ խօսքով, Սուէզի խնդիրը ղժբախտաբար նոյն ձեւով չի ներկայացնար անգլիացիներուն եւ եգիպտացիներուն:

Անգլիացիներուն համար անկալ զինուորական, այսինքն ռազմազի- տական խնդիր մըն է, մինչ եգիպ- տացիներուն համար՝ քաղաքական ու ազգային: Ու պատմութեան ընթացքը, որոնք այս օրերուն Գահիրէի մէջ կը գուժարեն իրենց ժողովները, սեղա- նի առջեւ կը նստին բոլորովին տար- բեր նպատակներու մղումով:

Այնքան ատեն, որ Անգլիա վստահ չէ Սուէզի ապահովութեան, չի կրնար իր ուժերը հեռացնել այդ գօտիէն: Իսկ եգիպտոս, ուր Սուէզի

խնդիրը դարձած է ազգային արժա- նապատութեան խնդիր մը, առանց նոր յեղաշրջումներու հեռանկարին, չի կրնար հրաժարիլ պահանջէ մը, որ նախորդ վարչակարգէն ժառանգու- րիւն մնաց այսօրուան յեղափոխա- կան ղեկավարներուն:

Ինչպէս կը տեսնուի, խնդիրը բա- ւական բարդ է: Բայց ասոր կողմին կայ նաեւ այլ մտահոգութիւն մը, որ այս անգամ ի նպաստ համաձայնու- րեան մը կը ներկայանայ: Արեւմտե- ան աշխարհը, որուն մէկ կարեւոր մասը կը կազմէ Անգլիան իր գաղթա- պետութիւններով, կը փափաքի հաւա- ցական պատերազմի մը պարագային, իրեն հետ ունենալ արաբական երկիր- ները ու յատկապէս՝ եգիպտոսը: Ասի- կա ոչ թէ արաբական երկիրներու ու- ժին, այլ՝ անոնց աշխարհագրական դիրքին եւ Միջին Արեւելքի բարիւղի անսպառ արդիւններուն համար: Այս մտահոգութեան մեկնելով կարելի է վստահ ըլլալ, որ Լոնտոն ճիգ պիտի չխնայէ հնարաւոր բոլոր զիջումները ընելու՝ Գահիրէի հետ համաձայնու- րիւն մը կնքելու համար:

**ԱՅՍՕՐ 24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ**



- 1909 - Մահ՝ Եղիշէ Թոփճեանի:
- 1975 - Շ. Յ. Ա. Մարտիկներ կ'ահաբեկեն Փարիզի թուրք դեսպան Խամ- յիւ Էրեզը եւ վարորդը:

(ՀԱՏՈՒԱԾ)

# Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն



## ԱՇԽԱՐՀ



### ԿՈՉ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչությունը կոչ կ'ուղղէ Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտպոլի համակիրներուն, որպէսզի այսօր ուղղուին Պէյրութի Քաղաքապետարանի դաշտ, քաջալերելու համար Լիբանանի ախոյեան՝ Օլիմփիքը, որ այսօր երեկոյեան ժամը 7:30ին, Արեւմտեան Ասիոյ ախոյեանութեան Կոնֆեդերացիոնի մրցաշարին, պիտի ձակարկուի Ռուսիայի դէմ (Յորդանան):

### «ՉԷՄՓԻՆՆԵՆ ԼԻԿ»

## ԵՌԿԵՆՅՈՒՄ ԵՒ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ՝ ՑԱՐԴ ԱՆՍԽԱԼԱԿԱՆ

«Չէմփիքը Լիկ»ի ֆուտպոլի մրցաշարին Ա. Հանգրուանի երթի մրցումներէն ետք, այժմ երկու խումբ էլ Ռէալ Մատրիտ կը հանդիսանան այն միակ երկու խումբերը, որոնք իրենց կատարած երեք մրցումներուն ալ յաղթանակ արձանագրած են, ապահովելով առաւելագոյն ինը կէտերը:

Օլիմփիքոս միակ խումբն ըլլալով ցարդ ոչ մէկ կէտ ապահոված է, կրելով յաջորդական երեք պարտութիւն:

Յունական այս խումբէն բացի, հինգ այլ խումբեր՝ Արսենալ, Աէֆ Աթէնք, Փանաթինայոս, Փարթիզան Պելկրատ եւ Սելթա Վիլո ցարդ չեն յաջողած յաղթանակ արձանագրել:

Ա. Հանգրուանի երթի մրցումներէն ետք, այժմ ութ խմբակներուն պատկերը կը ներկայացնէ հետեւեալը.

#### Ա. ԽՄԲԱԿ

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1. Պայէրն Միւնխի	1	2	0	4	3	5
2. Աստըրլէյթ	1	1	1	2	2	4
3. Լիոն	1	1	1	2	3	4
4. Սելթիք	1	0	2	3	3	3

#### Բ. ԽՄԲԱԿ

1. Տինամօ Քիւ	2	0	1	5	3	6
2. Ինթեր Միլան	2	0	1	5	4	6
3. Լոքոմոթիվ Մոսկուա	1	1	1	3	2	4
4. Արսենալ	0	1	2	1	5	1

#### Գ. ԽՄԲԱԿ

1. Տեփորթիօ Քորուսա	2	1	0	4	1	7
2. Մոնաքօ	2	0	1	6	2	6
3. Փ. Ս. Վ. Այնտհովըն	1	0	2	2	4	3
4. Աէֆ Աթէնք	0	1	2	1	6	1

#### Դ. ԽՄԲԱԿ

1. Եովէնթուս	3	0	0	8	4	9
2. Ռէալ Մադրիտ	2	0	1	5	5	6
3. Կայաքասարայ	1	0	2	3	4	3
4. Օլիմփիքոս	0	0	3	1	4	0

#### Ե. ԽՄԲԱԿ

1. Մ. Եունայթըտ	2	0	1	7	2	6
2. Շթուրկարթ	2	0	1	5	3	6
3. Ռէյնալդս	1	1	1	3	3	4
4. Փանաթինայոս	0	1	2	1	8	1

#### Զ. ԽՄԲԱԿ

1. Ռէալ Մատրիտ	3	0	0	8	3	9
2. Փորթօ	1	1	1	5	6	4
3. Մարսել	1	0	2	7	7	3
4. Փարթիզան Պելկրատ	0	1	2	1	5	1

#### Է. ԽՄԲԱԿ

1. Չելսի	2	0	1	3	3	6
2. Լացիօ Ռոմա	1	1	1	5	4	4
3. Սփարթա Փրակա	1	1	1	4	4	4
4. Պեշքիթաշ	1	0	2	3	4	3

#### Ը. ԽՄԲԱԿ

1. Այաքս Ամսթերտամ	2	0	1	3	1	6
2. Ա. Սէ. Միլան	1	1	1	1	1	4
3. Ֆ. Ք. Պրիւմ	1	1	1	2	3	4
4. Սելթա Վիլօ	0	2	1	1	2	2

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Պէյրութի առաջին միջազգային Մարաթոնի առիթով տեղի ունեցան նաեւ տարբեր բնոյթի հանդիսութիւններ, որոնց շարքին իր կզգայի մասնակցութիւնը բերաւ նաեւ Ա. Բ. Բ. Ա. ն պարմացնելով եւ հիացնելով Լիբանանի մարզասէր հանրութիւնը:

Արդարեւ, «Առողջապահութիւն եւ Նախազուրկութիւն» ընդհանուր խորագրին տակ Շաբաթ, 18 Հոկտեմբերի երեկոյեան, Քաղաքի Կերպարանական հրապարակին վրայ Ա. Բ. Բ. Ա. ն իր ստուար խումբերով ՎՈՒՇՈՒՅԻ, ՉԻ ՔՈՒՆԿԻ եւ ԹԱՅ ՉԻԻ մասնագիտական ելոյթներ ունեցաւ, որոնք պատրաստուած էին Ա. Բ. Բ. Ա. ն չին աւագ մարզիչ Մասթրը Չէն Չաու Եանկի կողմէ:

Այս ելոյթները, որոնք իրենց տեսակին եւ որակին մէջ անսխալնաբար էին Լիբանանի մէջ, լիբանանցի եւ օտար մարզասէրներու կողմէ ընդունուեցան մեծ խանդավառութեամբ:

Ինչպէս միշտ, այս ձեռնարկներով եւս Ա. Բ. Բ. Ա. ն իր մարզասէր հանրութեան կը ներկայանայ նոր ծրագիրներով:

### ԿՈՉ

Հ. Մ. Ը. Մ. իր հիմնադրութեան առաջին օրէն իսկ իր շուրջ հաւաքած է 6 տարեկանէն վեր տասնեակ հազարաւոր անձեր, որոնք աշխատած են Հ. Մ. Ը. Մ. ի մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի համար եւ Հ. Մ. Ը. Մ. ի «Քարճարցի» բարձրացուցիչ նշանաբանով եւ ոգիով:

Այսօր կարգը քուկո է: Գուն ալ քու հերթիդ կրնաս մաս կազմել Հ. Մ. Ը. Մ. ի սկաւտական շարքերուն եւ սկաւտական տարակազմի, սկաւտական օրէնքներ, գիտելիքներ, կանչեր եւ երգեր սորվիլ, տարիներու ընթացքին աստիճան ու պաշտօն ստանալ եւ զգալ Հ. Մ. Ը. Մ. ի սկաւտական ըլլալու հաճոյքը, ուրախութիւնը եւ հպարտութիւնը:

Մի՛ վարանիր, ուշ չէ, կ'արժէ փորձել եւ Հ. Մ. Ը. Մ. ի սկաւտական քոյր-եղբայրներու միասնական ապրիլ չարքաշ, նորութիւններով, խաղերով, արկածախնդրութիւններով եւ պանապան յայտագիրներով լեցուն կեանք մը:

Հ. Մ. Ը. Մ. ի Պուրճ Համուտ մասնաճիւղի սկաւտական պաշտօնական վերամուտը տեղի պիտի ունենայ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003ի երեկոյեան ժամը 5:00ին, Լեւոն եւ Սոփիա Յակոբեան Ազգային քոլեճի շրջափակին մէջ:

Հոն եղի՛ր եւ մաս կազմէ՛ Հ. Մ. Ը. Մ. ին:

Հ. Մ. Ը. Մ. ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ ՄԱՍՆԱՃԻՒԴԻ ՍԿԱՎՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՄԸԱՊԵՏՈՒԹԻՒՆ

### ԼՕՒԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱՃԻՒԴ ԸՆԹԱԿԱՆ Ա. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 27 Հոկտեմբեր 2003ի առաւօտեան ժամը 10:00ին, «Աղբայեան Հ.Մ.Ը.Մ.» Մարզամշակութային համակիրն մէջ: ԵԱՆՕԹ՝ Երթեկը ամպուլուած է Ազգային-Արմիթեան» շենքերու մուտքին, առաւօտեան ժամը 9:45ին:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ՀԱԿԱՌԱԿ ԿՈՒ ԶՆՁԱՆԱԿԵՆՈՒՆ

## ԷԼՊԵՐ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԵՒՐՈ

Կ'ԸՍԵ ՊԵՐԸՆ ՊԱՌԻՐ

Պայէրն Միւնխիի նախագահ Ֆրանց Պեքընպատը երէկ յայտարարեց, որ Լիոնի պրագիցի յառաջապահ Ճիւզեպի Էլպէր իրմէ պիտի ստանայ տասը հազար եւրօ, հակառակ անոր, որ ինք իր գրաւը չպարտուեցաւ:

«Չէմփիքը Լիկ»ի ֆուտպոլի մրցաշարին, Ֆրանսական կազմը իր ողջ տիրուած վրայ 1-1 արդիւնքով հաւասարութիւն արձանագրած էր:

Սկզբունքով, Էլպէր ինք էր գրաւը պարտուողը: Սակայն գերմանացի վեհաձեռն գտնուելով, ըստ, որ Էլպէր իրմէ պիտի ստանայ այդ տասը հազար եւրոյի գումարը, որովհետեւ ան բարի նպատակի համար պիտի գործածէ իրմէ ստանալիք գումարը: Պրագիցին այդ գումարը պիտի յատկացնէ իր երկրին մէջ ճամբաները գտնուող եւ անտուն մանուկներու յատկացուած ֆոնտին: Դարձի մրցումին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Նոյեմբեր 5ին, արդեօք Էլպէր Միւնխիի Ոլիմպիականի դաշտին մէջ պիտի յաջողի՞ կողմը նշանակել իր նախկին կազմին բերդէն ներս:



Պեքընպատը

### ՃԱՏՐԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԱՆՈՅԵԱՆ ԿԱԶՄԸ ԿԵՐԱԴԱՐՁԱՒ ՀԱՅԱՍՏԱՆ



Հայաստանի ճատրակի աղջկանց ախոյեան կազմը

Երէկ, Պուլկարիայէն Հայաստան վերադարձաւ Հայաստանի ճատրակի աղջկանց հաւաքականը, որ Եւրոպայի ճատրակի խմբային ախոյեանութեան մրցաշարին մեծ իրազորութեամբ մը կատարեց եւ առանց պարտութիւն մը կրելու Փոլովտիւի մէջ հանդիսացաւ Եւրոպայի ախոյեան:

Հայաստանի աղջիկները, առանց պարտութիւն կրելու, ապահովելով 13,5 կէտ, գերազանցեցին Հունգարիան (որ իր կարգին նոյնքան կէտ չհասցաւ) եւ հանդիսացան ախոյեան, Հայաստանի աղջկանց ճատրակի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով:

Էլիսա Դանիէլեան, Լիլիթ Մկրտչեան եւ Նելլի Աղինեան Փոլովտիւի մէջ իրենց կատարած այդ իրազորութեամբ, փաստեցին, որ Հայաստանի աղջիկները բաւական մեծ յառաջընթացներ արձանագրած են այդ մարզին մէջ:


Հայաստանի ճատրակի ֆետերասիոնը յայտնեց, որ ախոյեան հանդիսացած վարպետները պիտի ստանան 12 հազար տոլար արժողութեամբ դրամական պարգեւ:

### ԹԵՆԻՍ

## ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԱՊԱՀՈՎԵՅ Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ ԻՐ ՏՈՄՍԸ

Պալի մէջ (Չուիցերիա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարին Բ. Հանգրուանին իր կատարած մրցումին, Հրդ դասուած արժանութեամբ յաւիթ Նալպանտեան առանց դժուարութեան ապահովեց Գ. Հանգրուանին իր տոմարը, երբ իր մրցակիցը՝ Ֆրանսացի Անտօ Բլեման վիրաւոր ըլլալով իր մրցումը չկրցաւ շարունակել: Մրցումին առաջին սէթը կ'ընթանար ի նպաստ Նալպանտեանի՝ 4-1 արդիւնքով:

## ՊԵՔ ՀԱՄ ԲԱՅԱԿԱՅ ՍԱՆԹԱՆՏԻՐԻ ԴԻՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՄՐՅՈՒՄԻՆ



Պեքիւմ

Ռէալ Մատրիտի անգլիացի միջազգային միջնապահ՝ Տէյվիտ Պեքիւմ, շատ հաւանաբար իր մասնակցութիւնը չբերէ շաբաթավերջին Ռուսիայի Սանթանտերի դէմ տեղի ունենալիք Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Տրդ հանգրուան):

Ան ըսաւ, որ անցեալ շաբաթ Սելթա Վիլոյի դէմ տեղի ունեցած մրցումին, որոշ ցատեր կազմ իր ծունկին վրայ: Այդ մէկը անելով ի յայտ եկաւ Փարթիզան Պելկրատի (Սերպիա) դէմ տեղի ունեցած մրցումին («Չէմփիքը Լիկ»): Հակառակ վիրաւոր ըլլալուն, ան մրցումը այդ վիճակով շարունակեց մինչեւ աւարտը, նկատի ունենալով որ Ռէալ Մատրիտ արդէն իսկ իր երեք մարտիկներուն ալ փոփոխութիւնը կատարած էր:

Դրդ հանգրուանի մրցումներէն ետք, այժմ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը կը գրաւէ Վալենսիա, որ ունի 19 կէտ: Ռէալ Մատրիտ կը գրաւէ երրորդ դիրքը, երեք կէտով ետ մնալով անկէ: Ռուսիայի Սանթանտեր 11 կէտով կը գրաւէ հինգերորդ դիրքը:

Նշենք, թէ ցարդ Վալենսիա միակ խումբն ըլլալով պարտութիւն չէ կրած, մինչ վերջին դիրքը գրաւող Եսփանիոյ, ցարդ յաղթանակ չէ արձանագրած:

### ԻՐԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ ՅԱՆՁՆԵՑ ՄԱԿԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ



Պարատիի և Սալեհի

Իրան երկկ ՄԱԿի Կորիչային Գործակալու-  
թեան պատգամ մը յղած է՝ իր կորիչային ծրա-  
գիրին առնչութեամբ միջազգային մտավախու-  
թիւնները փարատելու համար:

Տեղեկագիրին յանձնումը տեղի կ'ունենար  
Բրիտանիոյ, Յրանսայի և Գերմանիոյ արտա-  
քին գործոց նախարարներու թեքրան առաքե-  
լութենէ մը 3 օր ետք: Անոնք յաջողած են համո-  
զել Իրանը, որ կորիչային իր ծրագիրները բա-  
ցալայտէ և իր կորիչային վարչերուն աւելի լայն  
հսկողութեան առիթ տայ:

Կորիչային Ուժանիւթի Միջազգային Գործա-  
կալութեան մօտ Իրանի դեսպան Ալի Աքպար  
Սալեհի յայտնած է, որ տեղեկագիրը լիովին կը  
բացայտէ կորիչային մարզին մէջ անցեալի  
մէր բոլոր խաղաղ գործունէութիւնները:

Գործակալութեան տնօրէնը՝ Մոհամէտ Պա-  
րատիի, որուն յանձնումը է տեղեկագիրը, յայտ-  
նած է, որ գործակալութիւնը այժմ պէտք է «ան-  
միջապէս սկսի ստուգման գործունէութեան և  
վերակառուցէ Իրանի կորիչային ծրագիրին ամ-  
բողջական պատմութիւնը»:

Սալեհի յայտնած է, որ Իրան իր խօսքը յար-  
գած է ինչ կը վերաբերի կորիչային իր ծրագի-  
րին մասին տեղեկութիւններու հայթայթումին:

Ան ըսած է նաեւ, որ եւրոպական երեք երկիր-  
ներուն հետ գործակցութիւնը ցուցանիչ է, թէ  
«կարելի է միջազգային հարցեր տիրակի ճամ-  
բով լուծել, փոխանակ միջազգային տագնապ-  
ներու միջոցաւ արտօնելու, որ անոնք հակակ-  
շիռէ դուրս գան»:

● ԻՐԱՆԻ մէջ իշխանութիւնները ամերիկեան  
համալսարանի մը իրանցի ծագումով մէկ դա-  
սախօսք ձեռնարկած են՝ լրտեսութեան կաս-  
կածներով, ըսած են անոր պաշտօնակիցները  
Չորեքշաբթի օր:

Քաղաքական գիտնական Տարիուշ Չահեւտի,  
որ Քալիֆորնիոյ համալսարանին մէջ կը դա-  
սախօսէ, աւելի քան 3 ամիսէ ի վեր Թեքրանի  
մէկ բանտին մէջ արգելափակուած է, յայտնած  
են անոնք:

● ԻՐԱՆ երկկ բողոք ներկայացուցած է Չուի-  
ցերիոյ դեսպանին, որ Իրանի մէջ ամերիկեան  
շահերը կը ներկայացնէ, Իրաքի մէջ ամերիկե-  
ան ուժերուն կողմէ իրանցիներու ձեռնարկա-  
լութեան դէմ:

(ԱՅՓ)

### ՓՈՒԹԻՆ ԽՐԻՍՏՈՍԱՆԻ ՄԵՋ ՌՈՒՄԱԿԱՆ ՕԴՈՒԺԻ ԽԱՐԻՍԽԻ ՄԸ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ



Փութին և Աքաւե

ՊԻՇՔԷՔ, 23 (ԱՅՓ).- Ռուսիոյ նախագահ  
Վլատիմիր Փութին  
Հինգշաբթի օր նախ-  
կին խորհրդային հան-  
րապետութիւններէն  
հըրրիւրպիտանի մէջ  
ռուսական օդուծի խա-  
րիսի մը բացումը կա-  
տարած է: Խորհրդա-  
յին Միութեան տապա-  
լումէն ի վեր անիկա  
արտասահմանի մէջ  
Մոսկուայի փնտրուա-  
կան առաջին խա-  
րիսին է:

Խօսելով չէչէն ան-  
ջատողականներու  
կողմէ Մոսկուայի մէկ  
թատերասրահին մէջ  
պատանդներ բռնելու  
դէպքին առաջին տա-  
րեդարձին առիթով,  
Փութին ըսած է, թէ խա-  
րիսի մը Կեդրոնական  
Ասիոյ մէջ շրջանային  
ապահովութեան օգ-  
տակար պիտի ըլլայ:

Խըրրիւրպիտանի  
մայրաքաղաքին 25 քմ.  
հեռաւորութեան  
գտնուող Քանթի օդու-  
ծի խարիսխին բացու-  
մը կատարելով, Փու-  
թին ըսած է. «Կ'առա-  
ջադրենք ամրապնդել  
ապահովութիւնը՝  
շրջանի մը, որուն կա-  
յունութիւնը թափ

ստացող տուեալ մըն է  
միջազգային կացու-  
թեան մէջ»:

Քանթի մէջ պիտի  
հաստատուին շուրջ 20  
«Մու - 27» և «Մու - 25»  
տիպի ռազմական  
օդանաւեր, ինչպէս  
նաեւ ուղղաթիւներ և  
500 ռուս փնտրուներ:

Խըրրիւրպիտանի  
նախագահ Աքար  
Աքաւե թղթակիցներու  
ըսած է, թէ Ռուսիա  
«Աստուծոյ և պատմու-  
թեան կողմէ տրուած է  
խըրրիւրպիտանի» և  
թէ «Ռուսիա յաւիտե-  
նապէս մեր բարեկամը  
պիտի մնայ»:

Խարիսխին գլխա-  
ւոր պարտականու-  
թիւնը օդային զօրա-  
կցութիւն տրամադրել  
պիտի ըլլայ խորհրդա-  
յին օրերէն շրջանին  
մէջ հաստատուած ու-  
ժերուն, յատկապէս  
Տաճիկիստանի  
գտնուող ռուսական  
201րդ բաժանմունքին:

Քանթի միայն քանի  
մը քմ. հեռաւորութեան  
կը գտնուի Պիշքէքի  
օդակայանին մէջ  
գտնուող ամերիկեան  
խարիսխէ մը, որ ԱՖ-  
Շրջանի մը, որուն կա-  
յունութիւնը թափ

րավիզ կանգնելու հա-  
մար կ'օգտագործուի:

Մերիկեան ուժերը  
աւանդականօրէն ռու-  
սական ազդեցութեան  
ծիրէն ներս ինկող այդ  
շրջանը հասած են  
2001ին, այդ օրերուն  
երբ կը փորձէին ԱՖ-  
դանիստանի մէջ թայե-  
պաններու վարչա-  
կարգը տապալել: Մեր-  
կային ամերիկացի  
2000 փնտրու կայ հոն:

Փութին ըսած է, թէ  
ռուսական խարիսխը  
ամերիկեան խարիս-  
խին մրցակիցը պիտի  
ըլլայ, դիտել տալով,  
որ Կեդրոնական Ա-  
սիոյ պետութիւններուն  
հողամասերուն վրայ  
«յօրավիզ կը կանգ-  
նինք միջազգային հա-  
կաւաքեկչութեան  
դաշինքին գործունէու-  
թեանց»:

Հակառակ Արեւ-  
մուտքին հետ գործակ-  
ցութեան իր պատգա-  
մին, արեւմուտքի ուժէ  
պաշտօնատար ներ-  
կայ չէ եղած Հինգշաբ-  
թի օրուան հանդիսու-  
թեան, իսկ արեւմու-  
եան լրատու աղբիւր-  
ներու ներկայութիւնը  
սահմանափակուած է:

### ԱՄՍՐԱԼԻՈՅ ՍԱՅՐԱՔԱՂԱՔ ՔԱՆՊԵՐԱՅԻ ՄԵՋ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԴԵՍ

ՔԱՆՊԵՐԱ, 23 (ԱՅՓ).- Մ. Նահանգներու նա-  
խագահ ձորձ Պուշ Հինգշաբթի օր պաշտպանած  
է Իրաքի ներխուժումը և ողջունած՝ շրջանային  
ապահովութեան մէջ Աւստրալիոյ «յատուկ» դե-  
րակատարութիւնը:

Աւստրալիոյ խորհրդարանին մէջ, Քանպերա,  
Պուշ խօսք առնելով ըսած է, որ Ասիա-Խաղա-  
ղական շրջանին մէջ ապահովութիւնը «միշտ  
այ կախեալ պիտի ըլլայ պետութիւններու պատ-  
րաստականութենէն՝ իրենց շրջապատին պա-  
տասխանատուութիւնը ստանձնելու, ինչպէս  
կ'ընէ Աւստրալիա»:

Օր մը առաջ ան դարձեալ Աւստրալիան նկա-  
րագրած էր իբրեւ «շերիք» մը, որ կը հսկէ Հարաւ-  
արեւելեան Ասիոյ սահմանին՝ ահաբեկչութեան  
դէմ պատերազմին ծիրէն ներս:

Մինչ Պուշ կը խօսէր, շուրջ 5000 ցուցարար-  
ներ անոր դէմ կ'արտայայտուէին խորհրդարա-  
նին առջեւ, անկէ պահանջելով, որ մեկնի իրենց  
երկրէն:

Աւելի ուշ, ինչպէս հոգի ձեռքակալուած է ամե-  
րիկեան դեսպանատան առջեւ սաստիկ բախում-  
ներէ ետք: Իսկ խորհրդարանին մէջ, երկու ձե-  
րակուտականներու իրահանգումով է մեկնիլ  
խորհրդարանէն՝ Պուշի խօսքին ընթացքին  
անոր դէմ արտայայտութիւններէ ետք:

Անոնք մերժած են մեկնիլ, մինչ Պուշ յայտ-  
նած է. «Կը սիրեմ ապատ արտայայտութիւնը»:

Աւստրալիոյ վարչապետը՝ ձոն Հաուրթ, իր  
հիւրին նման, քննադատութիւններ դիմագրա-  
ւած էր, երբ ամերիկեան ուժերը չէին յաջողած  
հաւաքական քանդուծի վէպքեր գտնել Իրաքի  
մէջ:

Պուշ, որ երկէ գիշեր Մ. Նահանգներ վերա-  
դարձաւ, ձեռնարկած էր շրջանային 6 երկիր-  
ներ շրջապատուի մը, որուն ծիրէն ներս ան այ-  
ցեկած էր ձափոն, Ֆիլիպիններ, մասնակցած  
էր Թայլանտի մէջ ԱՓԷՔի վեհաժողովին, որմէ  
ետք գացած էր Միւնխպուր, Պալի, ապա Աւստր-  
ալիա:

### ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ...

Ծարուճակուած Ա. Էջէն

մէն համապատասխան քայլերու դիմել՝ մերձեցը-  
նելու երկու երկիրները:

Նախարար Օսկանեան նաեւ ընդունուեցաւ  
Խրուսթիոյ փոխ վարչապետ Կորան Կրանիչի  
հետ: Քննարկումներու առանցքը կապմտեց եր-  
կու երկիրներու միջեւ տնտեսական յարաբե-  
րութիւններու վարգազման հեռանկարները:  
Խրուսթ պաշտօնատարը դիտել տուած է, որ իր  
երկրի ղեկավարութեան իմնական նպատակը  
Եւրոպական Միութեան անդամակցութիւնն է  
2006ին:

Երկուստեք ցանկութիւն յայտնուած է յարա-  
բերութիւններու վարգազման առնչութեամբ:  
Նախարար Օսկանեան շեշտադրած է երկու եր-  
կիրներուն միջեւ իրաւապայմանագրային դաշ-  
տի ստեղծման անհրաժեշտութիւնը:

Վարդան Օսկանեան ներկայացուցած է վեր-  
ջին շրջանին Հայաստանի քաղաքական և  
տնտեսական վարգազումներուն հողովոյթը: Ան  
եւս նկատել տուած է, թէ Հայաստանի քաղաքա-  
կան ուղղուածութիւնը Եւրոպային համարկումն  
է: Ան անդրադարձած է նաեւ Հարաւային Կով-  
կասի խնդիրներուն և յատկապէս Լեռնային  
Ղարաբաղի տագնապի լուծման հեռանկարնե-  
րուն:

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ...

Ծարուճակուած Ա. Էջէն

Ժողովի բացման Հայրապետական օրհնութեան իր  
խօսքով, վեհափառ Հայրապետը ընդհանուր գիծերով  
ներկայացուց կաթողիկոսարանի աշխատանքները գա-  
նազան կալուածներէ ներս, ինչպէս նաեւ յարաբերա-  
կան գործունէութիւնը՝ ազգային, միջազգային և միջ-  
եկեղեցական մակարդակներու վրայ: Կատարուած  
հսկայ աշխատանքին խտացեալ պատկերացումը տա-  
րով, վեհափառ Հայրապետը շեշտեց Հաւաքական ու Հա-  
մադրեալ աշխատանքին կարեւորութիւնը, յատկապէս  
Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կեանքին մէջ:

Բոլոր թեմերէն ժամանած թեմակալ առաջնորդներն  
ու իրենց պատկան Ազգ. Իշխանութեանց ներկայացու-  
ցիչները վեհափառի դահլիճին մէջ իւրաքանչիւր օրա-  
կարգով քննարկեցին յատկապէս կաթողիկոսարան-  
թեմ գործակցութեան սերտացման ճամբով՝ Մեծի Տանն  
Կիլիկիոյ կաթողիկոսութեան առաւել արգիւնաշատ  
գործունէութիւնը բոլոր մակարդակներու վրայ: Չա-  
նազան թեմերէ ժամանած աւելի քան 30 ժողովական-  
ներ մանրամասնօրէն զբաղեցան ազգային-եկեղեցա-  
կան շարք մը հիմնահարցերու դրական լուծման Հարցե-  
րով: Անոնք քննարկումի առարկայ դարձուցին ինպատ-  
րութեան նախաձեռնութիւններուն զօրավիզ կանգնե-  
լու անհրաժեշտութիւնը, Հայրենիքին նիւթաբարոյա-  
կան օժանդակութիւն կատարելու աշխատանքներուն  
հետ աղերս ունեցող Հարցեր, թեմերէ ներս ընկերային  
ծառայութեան, կրօնական ու Հայցիցի դաստիարակու-  
թեան, էջմիածին - Անթիլիաս գործակցութեան, ինչ-  
պէս նաեւ Հայաստան - Սփիւռք գանազան յարաբերու-  
թիւններու ու գործակցութեանց առնչուող խնդիրներ:

ԼԻԲԱՆԱՆԱՏԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՒ  
ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կը ներկայացնեն՝

# ԱՊՈՒՄԷ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Նոյեմբեր 18ին  
ԻԻՆԷՍՔՐՈ ի օրանին մէջ  
Երեկոյեան 8:30-ին

Trading Places 01 611600, CD-Théque Ashrafieh - ABC.  
Համազգայինի գրախանութ, Նարեկացի գրախանութ  
և Ազգային Կայանքներն

BYBLOS BANK